առնի, դուք կրօնով զատուած մեր եղբայրներն էք, առատ-առատ կցանէք, կենձէք ձեր հայահատիկները. ձեր սրտից բղխած ջնչին մի մասը մեզ կտաք, իսկ մնացած մեծ մասը դուք լիուլի կըվայելէք, իբրև ձեր քրտնիքի արդար վաստակ»։ Հարկաւ, խորամանկ բէկերն իրենց չար նպատակին հասնելու համար ոչ մի հնար և միջոց չէին խնայել։ Ժողովրդական առածն ասում է՝ «կաշառքը մութ տեղը լոյս կտայ». ազդեցիկ և հարուստ բէկերի փայլուն ոսկիները մեծ հրաշքներ գործեցին։ Սրանից մի քանի տարի առաջ պետական պաշտօնեաների հսկողութեամբ հողաբաժինները երբոր չափչփում և յատկացնում էին գիւղական համայնքների իւրաքանչիւր ընտանիքին, այն ժամանակ Ջոռլու և Միրզաբէկլու գիւղացիներից մի քանի տասնեակ ծխեր բոլորովին զրկուեցին իրենց բարեբեր վարելահողերից. վանզի կարճամիտ և վատահոգի Հայերից և Թուրքերից ոմանք ցոյց էին տուել, որ այդ պետական հողաբաժինները զուտ բէկական հողեր են։ Ահա այսպիսի խորամանկ միջոցներով, իսկ երբեմն էլ սարսափելի սպառնալիքներով, վերջին 30—40 տարուայ ընթացքում բէկերը հետզհետէ յափշտակեցին պետական ընդարձակ և բերրի հողերը և կատարելապէս տէր դարձան։ Այդ արդաւանդ հողաբաժինների առատ բերքերից առուծի բաժինը իրենք բէկերն են ստանում, իսկ աշխատասէր և չարքաշ երկրագործ Հայ գիւղացին մնում է սոված, մերկ և խեղճ վիճակի մէջ։ Մի բուռն իսկական երկրագործ ժողովրդի դարաւոր